Արձանագրություն N3
ՀՄՄԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-58/26 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի գնահատման նիստի

ք. Արմավիր
Շահումյան 3

24.07.2026թ.
ժամը 11[00]

Նիստին մասնակցում էին՝

Նախագահ՝ Սեթ Վարդանյան
Անդամներ՝ Վահրամ Եղիազարյան
Արմեն Սահակյան
Քարտուղար՝ Մերի Բարեղամյան

1. Ընթացակարգի նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների հայտերում հայտնաբերված անհամապատասխանությունները շտկելու մասին

Սեթ Վարդանյան

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստը մեկ աշխատանքային օրով կասեցվել էր:

Քարտուղարը (գնումների համակարգողը) էլեկտրոնային աճուրդի իրականացման համակարգով ծանուցել է **«ԿԵՍ ԳԻՆ» ՍՊԸ** և **«ՄԲ Պարտներս» ՍՊԸ** մասնակիցներին հայտում առկա անհամապատասխանությունների մասին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել դրանք:

Մասնակիցները սահմանված ժամկետում շտկել են անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Ընթացակարգի ամփոփման մասին

Սեթ Վարդանյան

2.1 Հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ էլեկտրոնային աճուրդի արդյունքում նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով ընտրված մասնակից են ճանաչվում.

- չափաբաժին 1 - «ՄԲ Պարտներս» ՍՊԸ -ն,
- չափաբաժին 2 - «ԿԵՍ ԳԻՆ» ՍՊԸ -ն:

2.2 ՀՀ «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն անգործության ժամկետ է սահմանվում 10 օրացուցային օր:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ **Սեթ Վարդանյան**

Անդամներ՝ **Վահրամ Եղիազարյան**

Արմեն Սահակյան

քարտուղար՝ **Մերի Բարեղամյան**